

Հայտարարություն

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանի բարձր հովանու ներքո Երևանի պետական կրկեսի դերասանների ուժերով Գեղարքունիքի մարզի հանդիսատեսին կներկայացվի հետաքրքիր ու բովանդակալից կրկեսային ծրագիր՝ աճպարարների, ծաղրածուների, ձեռնածուների, ակրոբատների, մարմնամարզիկների մասնակցությամբ: Կրկեսային ծրագիրը մարզի քաղաքային համայնքներում կներկայացվի բացօթյա պայմաններում, անվճար հիմունքներով: Կրկեսի խումբը մարզի տարածքում հյուրախաղերով հանդես կգա հետևյալ ժամանակացույցով.

Հունիսի 16-ին, ժամը 12:00-ին, Ճամբարակ քաղաքում:

Հունիսի 16-ին, ժամը 15:00-ին, Սևան քաղաքում:

Հունիսի 16-ին, ժամը 18:00-ին, Վարդենիս քաղաքում:

Հունիսի 17-ին, ժամը 13:00-ին, Մարտունի քաղաքում:

Հունիսի 17-ին, ժամը 17:00-ին, Գավառ քաղաքում:

Գեղարքունիքի մարզպետարան